

ՂՈՒՆԿԻԱՆՈՍ ԿԱՐՆԵՑՈՒ
«ԳՈՎԱՍԱՆՔ ԳՐՔՈՒՅՍ» ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐԻԱԴԵԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Գնա՛, իմ խեղճ գիրք՝ գնա՛ մարդամեջ.
Գլուխդ քաշ քցի՛ր, մի՛ նեղանար հեջ:
Ականջդ փակի՛ր, սիրտդ լեն բռնի՛ր,
Ինչ ասեն, խոսին, տա՛ր ու համբերի՛ր:*

*Խ. Աբովյան**

Մեզ հասած քնարերգության ծավալուն ժառանգության մեջ զգալի բաժին ունեն մեծ մասամբ անձանոթ կամ քչերին ծանոթ բանաստեղծներ, որոնք անհարկիորեն դուրս են մնացել գիտական ու գրական տեսադաշտից, չեն հասկացվել, չեն գնահատվել զուտ այն պատճառով, որ ժամանակն էր այդպիսին: Նրանց թվին է պատկանում XVIII դարավերջի – XIX դարասկզբի աշուղ-բանաստեղծ, տաղերգու, գրիչ, երգիչ, երգահան (ունեցել է քաղցր ու դուրեկան ձայն), վանական, վաճառական, հաշվապահ, ուսուցիչ, լուսավորական շարժման նշանավոր գործիչ Ղունկիանոս Կարնեցին (1781/ 1786–1841): Նրա գրական ժառանգության ընդօրինակություններ կան Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում¹: Ցավոք, ոչ բոլոր գործերն են մեզ հասել. տաղերի գերակշռող մասը հոգևոր են: Առաջին անգամ տպագրվել են «Բազմավէպ» ամսագրում², ինչպես նաև՝ «Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցույ» վերնագիրը կրող փոքրածավալ գրքում³:

Ղունկիանոս Կարնեցու գրական ժառանգության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նա աշխարհիկ տաղասաց է, ժողովրդի կյանքով ապրող, նրա խրատներով ու խոհերով մտածող ժողովրդական բանաստեղծ: Նման երգերով առատ նյութ տալով հետագա ուսումնասիրությունների համար՝ ավելի լայնորեն է բացվում աշուղ-բանաստեղծի ներաշխարհը, մարդասիրությունը: Ղունկիանոս-երգ-

¹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի - 9731 և 9732 ձեռագրերը Ղունկիանոս Կարնեցու երգարաններն են, ուր ամփոփված են նրա տաղերի մեծ մասը, իսկ - 10177 ձեռագրում կան 3 հայերեն և 136 հայաստաոթուրքերեն անտիպ երգեր՝ գրված 1843 թ.:

² «Բազմավէպ» (Վենետիկ), հ. ԽԱ, 1883, հ. ԽԲ, 1884, հ. ԽԳ, 1885:

³ Քերդուածք Ղունկիանոս երգչի Կարնեցույ (այսուհետև՝ Քերդուածք), Վենետիկ, 1894: Այս գիրքը 1893 թ. Սուրբ Ղազար Միաբանության կողմից տպագրված ժողովածուի վերահրատարակությունն է:

չի ստեղծագործության մասին հայտնած կարծիքները պտտվում են միատիկայի (խորհրդագրության) շրջանակներում: Հայագետ Հ. Թորոսյանը գրում է, որ Ղուևկիանոս Կարևեցու թափառիկ, թշվառ կյանքը նրան ներշնչում է այնպիսի բանաստեղծություններ, որոնք միատիկ բնույթ ունեն⁴: Հայ ժողովրդի բարեկամ Վ. Բրյուսովը, ինչպես նաև Ա. Չոպանյանը ընդգծում են նրա ստեղծագործության նման նրբերանգր⁵: «Ղուևկիանոս Կարևեցին գրել է պատմական և առօրյա թեմաներով: Մեզ հասել են բացարձակապես միայն միատիկ և շատ քիչ առօրյա կյանքից»⁶,– ընդգծում է Վ. Բրյուսովը: Ըստ «Ղուևկիանոսի ընծան» գրքի առաջաբանի հեղինակ Ն. Գիրակոսյանի՝ «Քաղաքական ու տնտեսական ծանր վիճակում է ընթացել Ղուևկիանոսի կյանքը... նա ապրել է տագնապալի օրեր. ճաշակել է օտարների ճնշումը, հայահալած քաղաքականությունը, գաղթ, կոտորած, մահվան ու գերեզման, հայրենի եզերքի ու հարազատների կորուստների անասելի ողբերգությունը: ... ամեն մի իսկական բանաստեղծություն գրողի անձնական ապրումների արգասիքն է»⁷: Բնականաբար, իր ողբերգական կյանքի դրամատիկ անցքերն իրենց դրոշմն են դրել Ղուևկիանոսի ստեղծագործության վրա:

Ժամանակի տաղերգուների կողմից «Գովքն ու գովասանքը»⁸ արտահայտչական եղանակի շատ ընդունված և օգտագործված ձև է եղել: Ավանդական գովքի երգերի շարքին կարելի է դասել Ղուևկիանոս Կարևեցու ժողովրդայնության տարերքով, գրքի նշանակությունը շեշտելու նպատակով և սիրելի դարձնելու զգացումով գրված, իր երկին նվիրված (8 քառյակ, 32 քառատող) «Գովասանական գրքույս»⁹ նախերգ-ներբողը: Այն միջնադարյան քնարերգությունը հիշեցնող հոգևոր երգ է, պատմական զարգացման մի նոր աստիճանի չափաձո ինքնաբուխ

⁴ Տե՛ս H. Thorossian. Histoire de la littérature Arménienne. Paris, 1951, p. 225.

⁵ Տե՛ս Վ. Բրյուսով. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 103, Ա. Չոպանյան. Հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940, էջ 33:

⁶ В. Брюсов. Поэзия Армении, народная-средневековая-новая, в переводе русских поэтов. Ереван, 1966, с. 482.

⁷ Ղուևկիանոսի ընծան, էջ 6, 10:

⁸ Մ. Մկրյան. Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 135: Մ. Մկրյանը նշում է, որ ներբողի ժանրը մինչև Նարեկացին գոյություն ուներ և բավական զարգացած էր, բայց վերջինիս ներբողներն իրենց բնույթով աչքի ընկնող նորություններ էին. օրինակ՝ «Խաչի ներբողը»: Ավելի ուշ շրջանում ի հայտ եկան Նաղաշ Հովնաթանի «Գովք Երևանին», Դավիթ Սալաձորցու նշանավոր «Գովասանք ծաղկանց»-ը, Բաղդասար Դպրի «Գովասանութիւն սիրելւոյ»-ը, Առաքել Մյունեցու «Գովասանք Առաքելոց»-ը, Ղազար, Մինաս, Ստեփանոս, Հակոբ Թոխաթցիների ներբողները և այլն: Հիշենք Ասատուր Մնացականյանի «Գովանք թռչնոց» տաղաշարքը (տե՛ս Ա. Մնացականյան. «Գովանք թռչնոց» տաղաշարքը, նրա հեղինակը և ժամանակը. – Բանբեր Մատենադարանի», -13, 1980, էջ 233–258):

⁹ Տե՛ս Ղուևկիանոսի ընծան, էջ 12, Քերդուածք, էջ 1, «Բազմավեպ», հ. ԽԱ, էջ 238:

ու սրտահույզ գեղեցիկ խոսք: Լինելով XVIII դարի ողբի ու սթափման, տառապանքի և հույսի բանաստեղծության բաղկացուցիչ տարր՝ միաժամանակ գովեստի-փառաբանության, աղոթք-օրհնության հաղորդակցություն է Աստծո հետ և իբրև անցման շրջանի բանաստեղծություն՝ ունի զարգացման նոր ուղղություն: Անսահման մեծ երևակայությամբ, ավելի շատ մաքուր և վեհացնող քնարական սիրո ու համակրանքի զգացման միաստիկ բանաստեղծություն է:

Բանագետ Մարգիս Ջուռնաջյանը, իր աշխատությունում արժեքավոր նյութեր դնելով գիտական շրջանառության մեջ, խոսում է նաև աշուղ-բանաստեղծի մասին. «Ղունկիանոսն իր ժամանակին նմանվել է խավարի մեջ շողացող լույսի ճառագայթին»¹⁰: Որպես հմուտ մանկավարժ՝ ուրիշ առարկաների հետ դասավանդել է նաև աստվածաբանություն: Փաստորեն, լինելով փիլիսոփա-աստվածաբան, լուսավոր անհատ՝ խորապես զգում էր ժամանակի հակասություններից ծվատվող մարդու ներաշխարհը, ազգի հոգին ու միտքը: Իր երգերից մեկում Ղունկիանոսը գրում է. «Բերանս դիվիթ է, սրտիկս՝ դավթար,... խոսք ու խրատներ կգրե անստակ»¹¹: Աշուղ-բանաստեղծի խրատը չի խոչընդոտում լիրիկական գեղումների ծավալմանը, այլ հնարավորություն է տալիս թռիչքներ գործելու, ներսուզվելու իր հոգու և սրտի ծածուկ, խորին խորքերն ու քրքրելու իր բուռն զգացումները: Աշխարհի մարդու, իր ժողովրդի կյանքի համար մտահոգ երգչի միակ նպատակն է եղել զգաստացնել մարդկանց, ստիպել նրանց ճշմարիտ կյանքով ապրել, զբոսանքի ժամանակ անվայել խաղեր չերգել, այլ կատարել իր պատվական, զվարճալի տաղերը: Դրանց շնորհիվ նրանք կազատվեն ցնորական մեղքերից, կօժտվեն բարի առաքիություններով և զանազան տխրությունները փարատելով՝ կուրախացնեն սիրտն ու հոգին¹²: Տեղին է հիշել հանճարեղ Թումանյանին, ով կարևորում էր բանաստեղծի ոչ թե միտքը, այլ՝ սիրտը. «Եթե գրականությունը կյանքի հայելին ասենք, ապա գրականության ամեն տեսակի ստեղծագործությունների աղբյուրն ամենից առաջ մարդու սիրտն է»¹³:

Հայ բանասիրության երախտավոր Մ. Արեղյանը բացասական կարծիք ուներ այդ ժամանակաշրջանի բանաստեղծությունների մասին, հատկապես՝ ներբողների՝ այն համարելով անարժեք, ցամաք ու սնանկ, անկենդան, կյանքից կտրված¹⁴: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ եղել են նաև բացառություններ՝ ժողովրդական ոգին արտահայտող երգիչներ: Եզրահանգումն այն է, որ Ղունկիա-

¹⁰ Տե՛ս Մ. Ջուռնաջյան. Ջավախք, ժամանակագրություն. Ակնարկներ Ախալքալաքի ամբողջական պատմության, Երևան, 2002, էջ 176:

¹¹ Ղունկիանոսի ընծան, էջ 86. Քերդուածք, էջ 71, «Բազմավէպ», հ. ԽԳ, էջ 220:

¹² «Բազմավէպ», հ. ԽԱ, էջ 238:

¹³ Տե՛ս Թումանյանը քննադատ, կազմեց և խմբ.՝ Ն. Թումանյանը, Երևան, 1939, էջ 80, 244:

¹⁴ Տե՛ս Մ. Արեղյան. Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 551:

նոս Կարնեցու գրական ժառանգության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա ժողովրդական երգերը՝ հայերեն և հայաստառ թուրքերեն (մեծ մասամբ հոգևոր) տարածվում էին ժողովրդական լայն խավերի միջավայրում: Նրա ժողովրդական ոգու արտահայտչական եռանդով ու կորովով գրված «Գովասանք գրքույս» ներբողն աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ և բանաստեղծական պերճանքով: Այն նորություն էր և իր տեսակի մեջ մի քայլ առաջ, որում հեղինակն իր գրքի քննական, վերլուծական միտքն է զարգացնում: Այդ առումով պետք է գնահատել ոչ թե նրանում տեղ գտած հոգևոր և աշխարհիկ նյութերի ու պատկերների գեղարվեստականության չափով, այլ՝ նրա ներքին էության: Հարկ է նշել, որ դարաշրջանի մասին բանասեր-գրականագետ Շ. Նազարյանը գրում է. «Կրոնական երգի աշխուժությունը հետադիմության, գրական անկման արտահայտությունն չէ, ինչպես կարծում են ոմանք, այլ՝ ազգային վերանորոգության շարժման գործուն միջոց: ...Գրական նոր վերելքի սկզբնական երևույթ»¹⁵: Հենց այդ երևույթն էլ վառ գծերով արտահայտվում է բանաստեղծական խառնվածքով ուժեղ, ինքնատիպ, հոգևոր գաղափարները յուրովի մեկնաբանող Ղուկկիանոս Կարնեցու նախերգ-ներբողում:

Նախերգի առաջին քառյակի հարուստ տաղաչափությունը՝ երեք պարզ տողերի վերջում կրկնվող «Զբոսանք Հոգու» հոգեպես մաքրվելու, Աստծուն հասնելու հուսադրող խոսքերը, ներբողը դարձնում են առավել ազդու և հոգեպարար: Ընթերցողը զգում է քերթողական քնարի շունչը՝ մարդու հուզմունքի, զվարճության, զգացմունքի ալեկոծության, մտքի թափառման, բավականության համար որևէ գործ կատարելու ցանկությունը: Հեղինակը հարուստ երևակայությամբ փորձել է հոգևոր արժեքների ծարավը հագեցնել բարոյական վերափոխման «Զբոսանք Հոգու» կանչի յուրօրինակ երանգով. «Զվարճալի է, ուժ կուտա», «Միրտ կբանա», «Խիստ քաղցր անուշ հոտ կբուրե», «Մեկ ծաղկալի դաշտի նման կհրճվին շատ ծաղկունաք»¹⁶ և այլն: Ժողովրդական բանահյուսության տարրերի մի զարմանալի համադրություն, որի նպատակն է եղել հոգևոր և գեղարվեստական հզոր լիցքեր հաղորդել ընթերցողին:

Հոգևորի մասին աղոտ ակնարկներով, չափածո խոսքով Ղուկկիանոս-բանաստեղծը մեկ այլ քառյակում շեշտում է իր գրքի տված բարությունը, որ ամեն մարդի վիճակի չի հասկանալու. «Մեկ մոտեցիր, տես թե ինչպես կրլլաս ուրախ ու զվարթ»¹⁷: Այնպես է գովերգում, որ առաջին հայացքից թվում է, թե խոսքը ոչ թե գրքի, այլ սրբորեն անհաս գեղեցիկ կնոջ մասին է, որի հոգեկան հատկանիշները գուգորդվում են արտաքին հարդարանքի նուրբ ճաշակի հետ. «պճնել է խիստ գե-

¹⁵ Տե՛ս Շ. Ն ա գ ա ռ յ ա ն. Ողբի և սթափման բանաստեղծություն, Երևան, 1992, էջ 37, 39:

¹⁶ Տե՛ս նույն տեղում:

¹⁷ Տե՛ս Ղուկկիանոսի ընծան, էջ 12:

ղագարդ», սիրո թուլանքի մեջ բոցկլտում են հույսն ու լավատեսությունը՝ փարատելով տրտմությունը, սուգը, կոծը, լացը, սիրով հրդեհում սիրտը: Հոգևոր այլաբանությամբ նկատի ունի իր ոգևորության, բարության անսպառ աղբյուր գթառատ Աստվածամորը¹⁸, որին ուղղված տողերը մերթ կարոտի, մտատանջության, մերթ էլ թախանձանքի և անձնվիրության մրմունջներ են: Բազմազան խորհրդավոր իմաստներ ընդգրկող (հոգենորոգման, ուսուցողական, ճանաչողական, սթափման և այլն) Ղունկիանոս գեղագետ-փիլիսոփան՝ որպես անասան հավատի ուղեցույց, հոգու փրկագործության բառամթերք, նախընտրել է «Զբոսանք Հոգու» ինքնատիպ եզրույթը:

Հեշտ չէ թափանցել աշուղ-բանաստեղծի մտքերի ու զգացմունքների աշխարհը, առավել ևս զգալ նրա ամբողջ խորությունն ու վեհությունը: Հեղինակի ներբողի և գրքի անխզելի կապը մեզ իրավունք է տալիս բացահայտել երգչի բանաստեղծական էջերում իր ապրած ժամանակի բնութագրումը. «գէշ դար», «դառն աշխարհ», «վտանգներով լեցուն», «ուր սուգն ու տրտմությունը փարատող չկա», ուր մարդիկ «անհավատարիմ են, անհաստատ», «կմտենան՝ երբ գործս հաջող է, փողս առատ», «հանկարծ տեսնեն նեղության մեջ, օրս վատ», «երես կդարձնեն, հեռու կփախչին»¹⁹: Ղունկիանոս Կարնեցին զարմանալի հեշտությամբ է ջնջում դարերի հեռավորությունը: Այս տողերը, թվում է, գրվել են երեկ: Կյանքի բացասական երևույթների վերացման բանալին հեղինակը գտնում է ներբողի «Զբոսանք Հոգու» ներգործող ուժի, հոգեպես մաքրվելու, «Աստվածատիպար» մարդու բարձրակետին հասնելու իմաստի մեջ: Հումանիստական միտվածություն ունեցող միաստիկ (խորհրդագրաց) բանաստեղծը ոչ աշխարհիկ մտահղացումը մարմնավորում է բնության գեղեցիկ պատկերներով: Միաստիկը բացարձականացնում է հոգին, միաստիցիվոր ներդաշնորեն զուգորդվում է բնապաշտությանը՝ ձգտելով մարդու մեջ նրա աստվածային էության վերածնությանը, խախտված ներդաշնակության վերահաստատմանը: Խորհուրդը ժամանակի միջավայրի անողորմ բարքերից քարացած մարդկանց սրտերը բնության գեղեցկության հետ զուգորդելն է: Հեղինակը, բնությունը համարելով պոեզիայի և ներշնչման ոգեշունչ աղբյուր, այն դիտել է որպես վրդովված հոգու ցավի և վշտի, աշխարհից վերանալու, խաղաղվելու, ներդաշնակ ապրելու հոգր միջոց: Բնությունը սնում է ոչ միայն մարմինը, այլև՝ հոգին, որով կարելի է դիմակայել բոլոր արհավիրքներին: Մեծն Թումանյանի՝ գրականությանը տված բնորոշման նման տաղերգու Ղունկիանոսը «ձգտում է կյանքում ստեղծել մարդու էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ պատկերը, որ տվել է նրան Աստված, կազմված ու հյուսված բնության ամենա-

¹⁸ Տե՛ս Ա. Հարությունյան. Տեսիլքի և երազանքի տաղերգուն.– «Հայագիտական հանդես» (Երևան), 2015, - 2 (30), էջ 67–86:

¹⁹ Ղունկիանոսի ընծան, էջ 102, Քերդուածք, էջ 87:

մաքուր տարրերից»²⁰: Հոգու զբոսանքը բնության գեղեցկության հետ ծառայում է ի հայտ բերելու հոգևորի ուժը՝ բուժել, լուսավորել մարդու հոգին, հավատով առաջնորդվել, մեղքից հեռու լինել: Մեր հոգին գորացնելու համար պետք է Աստծուն հավատալ, երկրպագել, զրուցել, ճշմարտությամբ աղոթել, որ ցավը միշտ վերանա, կյանքը սեր դառնա:

Անզուգական է քառյակը՝ որպես քնարերգության գոհար, որում թարմ են ոչ միայն բնապատկերները, այլև՝ արտահայտչամիջոցները՝ շաղախված բնության լուսաթրթիռ զգացողությամբ: Գարունը մարդկային կերպարի բարոյական մաքրագործման հոգևոր վերածնությունն է, իսկ ծաղիկները՝ արդարների բազմությունը: Բանաստեղծական բազմախորհուրդ եղանակներով հաղորդելով պայծառ տրամադրություն՝ համր պատկերներն ավելի անմիջական, հուզական և նույնիսկ շոշափելի ու տեսանելի են դարձնում: Թվում է, թե շնչում ես գույնզգույն վարդերի բույրը, ամենուր տեսնում ես մեկը մյուսին սիրահարված դաշտի թովիչ ծաղիկների վսեմաշուք նազանքը: Այնքան անմիջական է կենդանության ներգործությունը, այնքան սուսավորիչ, որ այլաբանությունն անհարիր է: Քառյակի առաջին տողը հիշեցնում է միջնադարյան տաղերգուներով անկեղծորեն հիացած «Ծիածանի բոլոր գույներով շողշողացող ... դաշտային ծաղիկների պես հոտավետ և որպես նուրբ բույրեր» բրյուստվյան գեղագիտական բնութագրումները²¹: Ահա այսպիսի.

Ճերմակ, դեղին, կարմիր վարդեր, ներկիզ, նունուֆար, շուշան,

Միշտ իրարու սիրահարված՝ մեկը մեկու գույն կուտան.

Փթթել է բրաբիռն, նարդոս, քրքում, բալասան.

Ճեմե սիգալով տուր կամաց - կամաց Զբոսանք Հոգու²²:

Անցյալի գրական ավանդույթն անջնջելի հետք է թողել մեծ դեր ստանձնած բանաստեղծության վրա, չնայած, որ սկսվել էր վերականգնման, վերանորոգման մի շրջան: Ակներն է, որ վերափոխությունը կատարվում է և՛ գեղագիտական, և՛՝ գաղափարական առումներով: Խորապես ապրելով անցման շրջանի իր դարը՝ հավատացյալ Ղուկկիանոսը հանդես է գալիս մե՛րթ իբրև հավատքի ծանրախոհ երգիչ, մե՛րթ պարզ իրատանքի, երկնային և երկրային կյանքի երազող, մե՛րթ խոր աստվածաբան ու ճշմարիտ փիլիսոփա, գեղագետ: Կյանքից ու աշխարհից դառնացած, ձանձրացած բանաստեղծը փորձում է Աստծո տնօրինության մեջ

²⁰ Թումանյանը քննադատ, էջ 244:

²¹ Խ. Մարգարյան. Մանուկ Աբեղյանը և հայ հին գրականության պատմությունը, Երևան, 1946, էջ 37:

²² Տե՛ս Ղուկկիանոսի ընծան, էջ 12:

գտնվող մարդուն արքայություն տանելու միջոցով սատար լինել, սփռվել, հոգով զորացնել, ուրախացնել, բարօրություն պարգևել: Երկնքի փառքի և երանության արժանացնելով՝ գտնում է, որ Աստծո հավատը կրուժի վիշտը, թախիծը, անձնական ապրումները. դա հենց վերանորոգության անցման շրջանի (կրոնականից դեպի աշխարհայինը) բնորոշ գծերից մեկն է.

*Ուրախ կառնե տրտմյալները, հզոր զորություն ունի,
Անճառելի երանության անշուշտ կանե արժանի,
Ձեռքերեն բռնելով շիտակ արքայություն կտանի,
Առաջնորդ կլինի երկնուց փառաց՝ Ջրասանք Հոգու²³:*

Ղունկիանուր, կենսական խնդիր համարելով ժողովրդի մտավոր նորոգությունը և կրթությունը, իր չափածո խոսքով ցանկանում է օգնել մարդկանց՝ ապրել աստվածային պատվիրաններով, փայլել հոգևոր առաքինությամբ, ազատվել մեղքերի ծանր բեռից: Մեղքը, ինչպիսին էլ համարելու լինենք, աղճատում է մարդկային կերպարը, խախտում նրա հոգու ներդաշնակությունը: Աշխարհայինի և հոգևորի պայքարում այլևս չկա հոգին խաղաղվում է վերագտած հավատի, հույսի մեջ: Երգիչը հիացմունքի խոսքերով, հուզառատ, շռայլ թևավոր մտքերով, մեծարում, արժեքավորում է իր գիրքը: Պատկերավոր դարձնելով՝ համեմատում է փայլող թանկարժեք քարերի հետ, որը ժողովրդական աշխարհընկալման մտածողության արդյունք է: «Բոլոր թանկարժեք քարերի փայլով վետվետացող»²⁴ Վ. Բրյուսովի հայ պոեզիային տված բնորոշումներից հենց այս մեկը կարծես գրված է ստորև բերված առաջին իսկ տողի համար.

*Գին չի հասնի. զարմանալի յաքութ, զմրութ գուհար է,
Դժոխաց չար ցանկությունը բոլորովին կմարե²⁵:*

Ըստ գրականագետ Հ. Սահակյանի՝ «Որքան տաղանդավոր է հեղինակը, այնքան ավելի հուզիչ ու խորն են հոգեկան տվայտանքների նկարագրությունները», հնարավոր չէ ապրել լույս «բանի տեառն», մեղքերի քավությունն անհնար բան չէ, ներում ստանալու համար կա մի պարզ ճանապարհ՝ ապաշխարանքը, որի սքանչելի օրինակները կան անցյալի հոգևոր երգերում»²⁶:

²³ Նույն տեղում:

²⁴ Խ. Ս ա ր գ ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 37:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Հ. Ս ա հ ա կ յ ա ն. Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI–XVII դդ.), Երևան, 1975, էջ 32, 33:

Հայտնի է, որ Նարեկացու ողբերգությունն ապաշխարության երգ է: Մարդը սրտի դառնությամբ իր չար արարքներն է հիշում, որի համար հեծում, արտասվում է:

Ղուկկիանոսի ստեղծագործական մտահղացմամբ հնչող «Լույս կցցնե աստվածային, ձեռք բերելու ճար աս է», «Դարձ կուտա կը անգեղջ մեղավորաց Ջրսանք Հոգու», «Քեզի գղջումի մ(կձգե, կուլաս, կողբաս մեղքերդ», «Կուտա աչքերուդ հեղեղ, անձրնաց Ջրոսանք Հոգու» արտահայտությունները համահունչ են Մեծն նարեկյան ողբի՝ «Պահապան հոգիս մաքրագործիր», «Թոթափիր մեղքերիս փռշին», «Բյուր մեղքերի արգասիքներից, փոքրիկ մի մասն եմ ցույց տվել միայն» և նման այլ երանգներին: Նարեկացու նման աշուղ-բանաստեղծ Ղուկկիանոսն էլ իր եսի մեջ է տեսնում մարդկային բոլոր արատներն ու թուլությունները, հանցանքը քավելու հորդոր է կարդում: Կարծես Աստվածային ներշնչանքով լեցուն, քնարական մենախոսությամբ մարդուն ուղղորդում է մեղքերի զղջման, քավության, ապաշխարության: Հավատքն անհատական առաքինություն է, որն առաջնորդվում է բարության, ճշմարտության, մարդասիրության:

Տես, թե քեզ ինչ փափագներով փնտրել կուտա քո Տերդ,
Կարոտությունը կքաշես՝ սաստիկ եռալով սերդ²⁷:

Շ. Նազարյանը գտնում է, որ Գրիգոր Նարեկացու հանդեպ հայ ժողովրդի ունեցած դարերի պաշտամունքը նարեկացիական շարժման մի յուրօրինակ կերպարանք է ստանում XVIII դարում: «Այս բանաստեղծությունն է ահա (խոսքը «Մատյանի» մասին է. – Ա. Հ.) խորը կնիք թողել XVIII դարի քնարերգության վրա»²⁸: Նմանությունն ակնհայտ է. կարծես նոր դարերի ներդաշնակ հոգու վերածննդի արժեքը բացահայտող բանաստեղծ Ղուկկիանոսը Նարեկացի լինի՝ ծնված ուշ միջնադարում, որը ձգտում է ջնջել Աստծո և մարդկանց միջև եղած տարբերությունը: Նարեկացին, իբրև հանճարեղ բանաստեղծ, կանխատեսել է ոչ միայն իր գործի անմահությունը, այլև՝ նրա համաշխարհային նշանակությունը՝ հպարտությամբ ազդարարելով՝ «Ես պիտի հավերժ մնամ կենդանի»²⁹:

²⁷ Տե՛ս Ղուկկիանոսի ընծան, էջ 12, Քերդուածք, էջ 1, «Բազմավեպ», հ. ԽԱ, էջ 239:

²⁸ Տե՛ս Շ. Նազարյան. Նարեկացիական շարժման վերելքը 18-րդ դարում. – «Էջմիածին», Ժ, ԾԳ տարի, հոկտեմբեր, 1997, էջ 114Ժ:

²⁹ Ա. Ղ ա զ ի ն յ ա ն. Գրիգոր Նարեկացի, Երևան, 1980, էջ 34: Վերջերս Հոռմի կաթոլիկ եկեղեցու սրբազան քահանայապետ Ֆրանցիսկոս պապի կողմից 36-րդ տիեզերական եկեղեցու հոգու վարդապետի (վարդապետություն, որ հոգուց է գալիս) դոկտորի կոչման արժանացավ առաջին հայ քնարերգակ Գրիգոր Նարեկացին՝ որպես ոգու ջահակիր իր տաղերով և վիթխարածավալ հոգևոր սահմանադրություն համարվող «Մատյան ողբերգությամբ»:

Մ. Աբեղյանը գրում է, որ մեր բանաստեղծությունն, երկնքից իջնելով աշխարհականացել է, բայց այդ դեռ չի նշանակում, թե արդեն առավելությունը կատարելապես տրվում է երկրին³⁰: Ընդգծելով Սայաթ-Նովայի երկվությունը, նա նշում է, որ նրա դեգերումները երկրի ու երկնքի միջև ճիշտ այնպես են, ինչպես այդ արտահայտված է ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Թումանյանի մոտ.

Ո՞ր աշխարհքում ունեմ շատ բան.
Միտք եմ անում՝ է՞ս թե էն.
Մեջտեղ կանգնած՝ միտք եմ անում,
Չեմ իմանում՝ էս, թե էն³¹:

«Երկնքի և երկրի վեճը, ունենալով ժողովրդական ընդհանուր հիմք ու ակունքներ, շատ սիրված լինելու պատճառով հաճախ արժանացել է բանաստեղծների և աշուղների ուշադրությանը»³², – գրում է Ա. Դոլուխանյանը:

Աստվածային միտքը շարունակում է թևածել նաև Ղունկիանոս Կարնեցու «Գովասանք գրքույս» բանաստեղծության նախավերջին քառյակում: Իր գիրքը համեմատում է պտղատու այգու հետ՝ նկատի ունենալով աստվածային տիրույթը, որտեղ զվարճանալ կցանկանան մարդիկ: Այսպես՝ «Աստվածածնա սիրո բոցով կիրդեհե սիրտը ձեր», «Շատ օգտավոր բաներ կուտա իմաց Զբոսանք Հոգու»³³: Բանաստեղծը ձգտում է ճանաչել, հասկանալ աշխարհը, ներթափանցել երկնային (հոգեդեմ) և երկրային (նյութեդեմ) կյանքի երևույթների մեջ, բացահայտել դրանց միջև եղած կապը: Նա գտնում է, որ բոլոր դեգերումների, երկնային սավառնումների մեջ ևս կապված ենք երկրի հետ: Հեղինակը փորձում է զգալ ժամանակի զարկերակը, ցանկանում է հաշտեցնել հոգևորը մարմնականի, իսկ երկնայինը՝ երկրայինի հետ: Մրա դեմ ընդվզում է բարեպաշտ բանաստեղծի հոգին՝ զգալով աշխարհայինին դիմագրավելու իր անգորությունը.

Այս պտղայի այգուն մեջը զվարճանալ ո՞վ չուզեր.
Մտքերնիդ կբարձրացնե, դեպ ի երկինք կելլե վեր³⁴:

³⁰ Տե՛ս Մ. Աբեղյան. Հայոց հին գրականության պատմություն, գիրք II, Երևան, 1946, էջ 275, 580:

³¹ Հովհ. Թումանյան. Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1985, էջ 157:

³² Տե՛ս Նեբուես Մոկացի. Բանաստեղծություններ, աշխ. Ա. Գ. Դոլուխանյանի, Երևան, 1975, էջ 164:

³³ Տե՛ս Ղունկիանոսի ընծան, էջ 12:

³⁴ Նույն տեղում:

Հոգեբանական ինքնատիպ արտահայտչամիջոցը՝ «Զբոսանք Հոգու» կրկնակ տողերի ցայտուն երանգը, վերածնության շունչ, անկեղծ, անմիջական ոգի և քնարականություն է հիշեցնում: Քաջածանոթ լինելով թուրքական և պարսկական ժողովրդական ստեղծագործությանը և, առհասարակ, մշակույթին՝ Կարնեցին հմտորեն օգտվել է դրանցից: Գրականագետ Հ. Սահակյանը հանգում է այն եզրակացության, որ «Նույնիսկ օտար լեզուներով հորինված երգերում ... օտարամույժը... միայն արտաքին ձևն էր, երգերն իրենց ներքին էությամբ, գաղափարական բովանդակությամբ հայկական են»³⁵:

«Գովասանք գրքույս» բանաստեղծության վերջին քառյակում հայաբառ տողերն ընդմիջարկվում են Արևելքի ժողովուրդների մեջ տարածված թուրքաբառ տողերով: Երևույթ, որ ավելի տիպական էր աշուղական երգերին և ավելի սակավ չափով էր նկատվում տաղերգության մեջ: Վառ արտահայտությունն է ներբողի վերջին քառյակը.

Տիվանի ու աճեմիներ, իլահիներ կա գրուն,
Տեստեն, շեքի, դելենտերի, տյուպեիթներ խիստ սիրուն,
Ղունկիանոսին ընծայն է սա քաղցրաձայն եղբայրներուն,
Հրամանեցէ՛ք, ձեզ համար միշտ բաց է Զբոսանք Հոգու³⁶:

Օգտագործված օտար արևելյան բառերն իր գրքի մեջ զետեղված տաղերի վերնագրերն են, եզրահանգում-ընդհանրացումները: Տեղին է հիշել մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի՝ «Ժամանակի ծովելու», «լեզվի դարդը քաշելու» անկարողությունը շեշտող մտքերը՝ «էս ա պատճառը՝ որ մեր նոր լեզվի կեսը Թուրքի ու Պարսից բառ ա»³⁷:

Ղունկիանոս Կարնեցին ծանոթ է եղել տաղաչափական կանոններին, բանաստեղծական տների կառուցման գաղտնիքներին, օգտվել է հայերեն այբբենական

³⁵ Տե՛ս Հայ աշուղներ, XVII-XVIII դդ. կազմեց՝ Հ. Սահակյանը, Երևան, 1961, էջ 19:

³⁶ Տե՛ս Ղունկիանոսի ընծան, էջ 12, Քերդուածք, էջ 1, «Բազմավեպ», հ. ԽԱ, էջ 239: Հարկ է նշել, որ՝ տիվանի (պարսկ.) – բանաստեղծություն կամ բանաստեղծությունների ժողովածու, նան դիվանական, ստենական, արքունի, վիպասան, քաջ բանաստեղծ և այլն, աճեմի (պարսկ.) – պարսիկ, ոչ արաբ, օտար, իլահի (պարսկ.) – աստվածեղեն, աստվածային օրհներգություն, երգ, գովություն, տեստեն (պարսկ.) – դասթան-պատմություն, լեզենդ, հեքիաթ, շեքի (պարսկ.) – անվճռական, տատանվող, հոռետեսական, դելենտերի (պարսկ.) – դերվիշական, տյուպեիթ (պարսկ.) – երկու բեյթ – բանաստեղծության երկու տող՝ երկտող: Այս բառերի բացատրությունների համար շնորհակալություն ենք հայտնում Մատենադարանի կրտ. գիտաշխատող Անի Ավետիսյանին և պ. գ. թ. Քրիստինե Կոստիկյանին:

³⁷ Տե՛ս Խ. Աբովյան. ԵԼԾ, հ. 3, Երևան, 1948, էջ 64:

կարգից և որպես արտահայտման միջոց ընտրել վանկերով կազմված տողեր՝ գրաշար ձևը: Տողի վերջին բառը բաժանել է վանկերի հայերեն այբուբենի տառերի հաջորդականությամբ և միացրել ու շաղկապով. սա արևելյան աշուղական արվեստը հայեցի դարձնելու, «լեզուն, դայիմ բռնելու»³⁸ լավագույն օրինակ է.

Միրուդ ճեղքած սիրտս՝ կեն ու այբ ու բէ (կար):
Վերջապես ինձ քովդ տյուն ու այբ ու բէ (տար)³⁹:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ ուշ միջնադարի ստեղծագործող տաղանդավոր երգիչը բացել է իր հոգին աշխարհի ու մարդկանց առաջ և այսօր էլ հայ ժողովրդի մեջ է իր երգերով: Ղունկիանոս Կարնեցին պատկանում է լուսավոր, գրագետ (յոթ լեզու է իմացել) աշուղ-բանաստեղծների այն շարքին, որոնց ցայտուն ներկայացուցիչներն են Սայաթ-Նովան ու Ջիվանին: Նախախնամության ընտրյալ (այժմ նաև ներբողագիր) բանաստեղծը, բացահայտելով ներդաշնակ հոգու վերածնության արժեքը, կրում է Գրիգոր Նարեկացու «լուսավորչի կանթեղը», որի լույսն անմար է ու անշեջ:

СТИХОТВОРЕНИЕ «ХВАЛА НАПИСАННОМУ МНОЙ»
ЛУНКИАНОСА КАРНЕЦИ

АРИАДНА АРУТЮНЯН

Р е з ю м е

Панегирик, начинающийся словами «Хвала написанному мной»–образец армянской лирики, автором которого является поэт Лункианос Карнеци, один из последних представителей армянской поэзии конца XVIII – начала XIX вв. Общая теоретическая оценка стихотворения позволяет выделить типологические черты, присущие армянской поэзии этого времени и то, как они отразились в панегирике. Своими песнями автор предоставляет богатый материал для дальнейшего исследования его самобытного творчества.

³⁸ Տէ՛ս նույն տեղում:

³⁹ Տէ՛ս Ղունկիանոսի ընծան, էջ 26, Քերթուածք, էջ 15, «Բազմավէպ», հ. ԽՄ, էջ 335:

THE POEM “PRAISE TO MY BOOK”
BY GHUNKIANOS KARNETSI

ARIADNA HARUTYUNYAN

S u m m a r y

The panegyric, which begins with the words “Praise to my book”, is a piece of Armenian lyrics written by the poet Ghunkianos Karnetsi, one of the last representatives of the Armenian poetry of the end of the 18th and the beginning of the 19th century. General theoretical assessment of the poem allows to distinguish the typological features proper to the Armenian poetry of that period and, how they are reflected in the panegyric. With his songs the author provides rich material for the further investigation of his distinctive creative life.